ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4065-Ա « 20 » օգոստոսի 2026 թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Արսեն Մկրտչյանի ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանի 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել է բողոքի քննություն:

2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքի քննության շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 6-ին հրավիրվել են լսումներ, որին մասնակցել են Արսեն Մկրտչյանի ներկայացուցիչներ Արթուր Հովհաննիսյանը և Հարություն Հայրապետյանը:

Ուսումնասիրելով 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքը, վարչարարության շրջանակներում իրականացված լսումների վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 6-ի արձանագրությունը և գնահատելով բողոքի առարկային առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/1323/05/22 վարչական գործով 2023 թվականի նոյեմբերի 8-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով (այսուհետ՝ Վճիռ) պարտավորեցվել է Երևանի քաղաքապետարանին Արսեն Մկրտչյանին տրամադրել դիմումով պահանջված Վ.Սարգսյան ինստիտուտի հետնամասում գտնվող Նոր Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոցին հարող տարածքի վրա ինքնակամ կառուցված շինության օրինականացման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ:

Ի կատարումն Վճռի պահանջի՝ Երևանի քաղաքապետի կողմից ընդունվել է 2026 թվականի ապրիլի 30-ի N 2181-Ա որոշումը, որի 1-ին կետով Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող, Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 113/2 հասցեում գտնվող 930.4քմ ընդհանուր մակերեսով հողամասում կառուցված՝ կիսակառույց բնակելի տուն գործառական նշանակությամբ ինքնակամ կառույցը համարվել է Երևան քաղաքի սեփականությունը և ճանաչվել է օրինական:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի մայիսի 14-ի թիվ Ն/30443-26 գրությամբ, ի լրումն թիվ Ն/28038-26 գրության՝ նշվել է հետևյալը. «..... Երևանի քաղաքապետի 30.04.2026թ. հ.2181-Ա որոշման հետ կապված, հայտնում ենք, որ որակավորում ունեցող

չափագրողի կողմից ներկայացված օրինականացվող շինության հատակագծային լուծումներում բացակայում են բնակելի սենքերը՝ ինչը հակասում է ՀՀՇՆ 31.02.2022թ. «Բնակելի շենքեր, մաս II անհատական բնակելի տներ» ՀՀ շինարարական նորմերով /4. ընդհանուր դրույթներ, կետ 25) սահմանված բնակելի տանը ներկայացվող պահանջներին, ինչպես նաև ապահոված չէ ինքնակամ իրականացված բնակելի տան նորմատիվային հեռավորությունը հայցվող հողամասի սահմաններից՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N04-Ն /Հավելված փոփոխություն 2024 թվականի նոյեմբերի 5-ի N19-Ն/ հրամանով հաստատված ՀՀՇՆ 30.01.2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով սահմանված պահանջների / կետեր 131, 132 և գլուխ XXVII հակահրդեհային պահանջներ/՝ շինության հողամասի սահմաններին կից ճակատներում առկա լուսային բացվածքի մասով, ինչը սահմանափակում է այլ անձանց /այդ թվում Երևան համայնք/ իրավունքները և օրենքով պահպանվող շահերը՝ համաձայն «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի /կետ 2, ենթակետ ա)/:»

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պարտականությունները կատարողի 2026 թվականի հուլիսի 9-ի N 3423-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 30-ի N 2181-Ա որոշումը ճանաչվել է անվավեր:

Արսեն Մկրտչյանի ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանը 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքով խնդրել է անվավեր ճանաչել և բեկանել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պարտականությունները կատարողի 2026 թվականի հուլիսի 9-ի N 3423-Ա որոշումը:

2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքով չեն ներկայացվել 2026 թվականի հուլիսի 9-ի N 3423-Ա որոշման անվավերության հիմքում դրված՝ 2026 թվականի մայիսի 14-ի թիվ Ն/30443-26 գրության մեջ նշված փաստական հանգամանքները հերքող կամ մատնանշված քաղաքաշինական նորմերը խախտված չլինելու հանգամանքը հիմնավորող ապացույցներ:

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է նույն օրենքի երկրորդ բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե չորրորդ բաժնով այլ բան նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից:

Արսեն Մկրտչյանի ներկայացուցիչները թիվ Դ-77561-26 բողոքով, ինչպես նաև վարույթի լսումների ընթացքում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել են, որ բողոքարկված որոշումն ընդունվել է վարչական վարույթի համար սահմանված ժամկետի խախտմամբ, վարչական վարույթը հարուցվել է իրավական հիմքերի բացակայության պայմաններում, քանի որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի գոյության պայմաններում դատական կարգով լուծում է տրվել որոշման առարկա շինության օրինականացման հարցին, իսկ որոշման անվավերության պարագայում ստացվում է, որ դատական ակտի կատարումը կրում է ձևական բնույթ, ավելին՝ անվավերության հիմում դրվել է ոչ թե մասնագիտական եզրակացություն, այլ ներքին գրագրություններ, որոնցով չի կարող հաստատվել կառույցն օրինականացման ենթակա չլինելու հանգամանքը:

Արսեն Մկրտչյանի ներկայացուցիչները բողոքարկման հիմքում նաև դրել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ արտահայտված այն դիրքորոշումը, ըստ որի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը հանդիսանում է անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը և այդ ակտի արդյունավետ կատարմամբ ապահովվում է իրավունքի գերակայությունը, հետևաբար դատական ակտի կատարման գործընթացում համայնքի ղեկավարից այլևս չի պահանջվում պահպանել օրենքով սահմանված այն ընթացկարգը, որը կիրառելի է վեճի և/կամ դատական ակտի բացակայության պայմաններում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա/ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ/ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի մայիսի 14-ի թիվ Ն/30443-26 գրությամբ, ի լրումն թիվ Ն/28038-26 գրության՝ նշվել է հետևյալը. «..... Երևանի քաղաքապետի 30.04.2026թ. հ.2181-Ա որոշման հետ կապված, հայտնում ենք, որ որակավորում ունեցող չափագրողի կողմից ներկայացված օրինականացվող շինության հատակագծային լուծումներում բացակայում են բնակելի սենքերը՝ ինչը հակասում է ՀՀՇՆ 31.02.2022թ. «Բնակելի շենքեր, մաս II անհատական բնակելի տներ» ՀՀ շինարարական նորմերով /4. ընդհանուր դրույթներ, կետ 25) սահմանված բնակելի տանը ներկայացվող պահանջներին, ինչպես նաև ապահոված չէ ինքնակամ իրականացված բնակելի տան նորմատիվային հեռավորությունը հայցվող հողամասի սահմաններից՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N04-Ն /Հավելված փոփոխություն 2024 թվականի նոյեմբերի 5-ի N19-Ն/ հրամանով հաստատված ՀՀՇՆ 30.01.2023

«Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով սահմանված պահանջների / կետեր 131, 132 և գլուխ XXVII հակահրդեհային պահանջներ/՝ շինության հողամասի սահմաններին կից ճակատներում առկա լուսային բացվածքի մասով, ինչը սահմանափակում է այլ անձանց /այդ թվում Երևան համայնք/ իրավունքները և օրենքով պահպանվող շահերը՝ համաձայն «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի /կետ 2, ենթակետ ա)/:»

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները, որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն՝ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները, որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:

2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքով բողոքաբերը չի հիմնավորել 2026 թվականի հուլիսի 9-ի N 3423-Ա որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմքով անվավեր ճանաչման ենթակա լինելու փաստական հանգամանքը, չի ներկայացրել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի մայիսի 14-ի թիվ Ն/30443-26 գրության մեջ նշված փաստական հանգամանքները հերքող և նույն գրության մեջ նշված քաղաքաշինական նորմերի պահանջները խախտված չլինելու հանգամանքը հիմնավորող ապացույցներ, ինչպես նաև չի հիմնավորել բողոքարկված որոշման մեջ մեջբերված՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները կիրառելի չլինելու հանգամանքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ.

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 9-ի N 3423-Ա որոշման վերանայման վարույթը նախաձեռնվել է 2026 թվականի հունիսի 11-ին, ինչպես նաև հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 30-ի թիվ Ն/28038-26 զեկուցագիրը, 2026 թվականի մայիսի 14-ի գրությունը և ղեկավարվելով ՀՀՇՆ 2022 թվականի փետրվարի 31-ի «Բնակելի շենքեր, մաս II անհատական բնակելի տներ» շինարարական նորմերի «4. ընդհանուր դրույթներ»-ի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն (Հավելված փոփոխություն 2024 թվականի նոյեմբերի 5-ի N 19-Ն) հրամանով հաստատված ՀՀՇՆ 2023 թվականի հունվարի 30-ի «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով սահմանված պահանջների 131-132 կետերով և XXVII գլխի հակահրդեհային պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ, 43-րդ, 69-րդ, 75-րդ հոդվածներով և նույն օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Երևանի քաղաքապետարան հասցեագրված՝ Արսեն Մկրտչյանի ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանի 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ Դ-77561-26 բողոքը մերժել և Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պարտականությունները կատարողի 2026 թվականի հուլիսի 9-ի N 3423-Ա որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ